ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1/Հ2011/0718

ք. Երևան "18" հուլիսի 2011թ.

Հայկական Ծրագրեր Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը ի դեմս տնօրեն Աշոտ Խաչատրյանի, հետագայում՝ Կատարող, մի կողմից և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե ի դեմս նախագահ Սամվել Հարությունյանի, հետագայում՝ Պատվիրատու մյուս կողմից, կազմեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի համաձայն Կատարողը Պատվիրատուին է հանձնում «ՀԾ-Հաշվապահ» համակարգ 4 /չորս/ աշխատատեղի համար, հետագայում՝ Համակարգը, ինչը ներառում է հետևյալը՝

1.1.1. Կատարողը Պատվիրատուին է հանձնում՝
- լազերային սկավառակը, որը պարունակում է Համակարգի տեղադրման ծրագիրը
- էլեկտրոնային բանալին
- օգտագործման ձեռնարկը
- Համակարգի դասընթացին մասնակցելու կտրոնը:

1.1.2. Համակարգի հանձնումը կատարվում է Կատարողի գրասենյակում և հաստատվում է երկկողմանի ստորագրված ընդունման-հանձման ակտով:

1.2. Սույն պայմանագրի համաձայն, Համակարգի հանձնումը ավարտելուց հետո, Կատարողը սպասարկում է Պատվիրատուի մոտ տեղադրված Համակարգը, ինչը ներառում է հետևյալը՝

1.2.1. Համակարգի ընթացիկ շահագործման հետ կապված խորհրդատվություն:

1.2.2. Համակարգի թարմացված տարբերակների տրամադրում, որտեղ արտացոլված են հաշվապահական և հարկային հաշվառմանը վերաբերվող լրամշակումները և նոր ֆունկցիոնալ հնարավորությունները:

1.3. Սպասարկման ձևը.

1.3.1. Սպասարկման աշխատանքները իրականացվում են հեռահաղորդակցության (հեռախոսակապ, ինտերնետ, էլ.փոստ և այլն) միջոցներով:

1.3.2. *Համակարգի թարմացված տարբերակները տրամադրվում են Կատարողի գրասենյակում, այդ նպատակով* կազմակերպված սեմինարների ժամանակ:

2. Պայմանագրի ժամկետը

2.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի և Կատարողի կողմից հաստատելու պահից և գործում է մեկ տարի:

3. Համակարգի արժեքը և վճարման կարգը

3.1. Համակարգի արժեքն է 231,000.00 դրամ, ԱԱՀ 20%՝ 46,200.00 դրամ, ընդամենը՝ 277,200.00 դրամ:

3.2. Պատվիրատուն վճարում է Համակարգի արժեքը Պայմանագիրը հաստատելուց հետո, 5(հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Հետագայում ավելի շատ աշխատատեղերի համար նախատեսված համակարգին անցում կատարելու դեպքում Պատվիրատուն վճարում է համակարգերի անցման օրվա դրությամբ սահմանված արժեքների տարբերությունը:

4. Կատարողի պարտավորությունները

4.1. Ժամանակին և որակով կատարել պայմանագրի առարկան կազմող աշխատանքները:

4.2. Ծրագրային ապահովման մեջ խափանումների և սխալների հայտնաբերման դեպքերում (բացի տեխնիկական և ծրագրային միջոցների անհամատեղելիության, տեխնիկական միջոցների խափանումների, ծրագրային վիրուսների, աշխատակիցների՝ ծրագրով չնախատեսված գործողությունների պատճառով առաջացած դեպքերի) վերացնել դրանք ապագա տարբերակներում:

4.3. Տրամադրել Պատվիրատուին Համակարգի այն տարբերակները, որոնք լույս են տեսել մինչև Պայմանագրի ավարտը:

4.4. Պայմանագիրը հաստատելուց հետո 3 ամսվա ընթացքում Պատվիրատուի մեկ աշխատակիցը կարող է մասնակցել Կատարողի կողմից կազմակերպվող «ՀԾ-Հաշվապահ» համակարգի դասընթացին, որի արժեքը ներառված է պայմանագրի 3.1 կետում նշված գումարի մեջ: Կատարողը պարտավորվում է սկսել Համակարգի դասընթացը ոչ ուշ քան 10(տաս) աշխատանքային օրվա ընթացքում՝ Պատվիրատուի աշխատակցի գրանցման օրվանից սկսած:

4.5. Պայմանագիրը հաստատելուց հետո 6 ամսվա ընթացքում Պատվիրատուն կարող է հետ վերադարձնել Համակարգը՝ ետ ստանալով վճարված գումարը: Եթե Պատվիրատուի աշխատակիցը մասնակցել է 4.4 կետում նշված դասընթացին, ապա հետ վերադարձվող գումարը կազմում է 253,200.00 դրամ:

4.6. Համակարգի հետ տրամադրվող էլեկտրոնային բանալու օգտագործման երաշխիքային ժամկետը կազմում է 6 ամիս՝ սկսած պայմանագիրը հաստատելու օրվանից: Եթե այդ ժամկետի ընթացքում էլեկտրոնային բանալու աշխատանքում հայտնաբերվեն թերություններ, ապա այն Պատվիրատուի կողմից անվճար կփոխանակվի: Տվյալ երաշխիքը չի գործում հետևյալ դեպքերում՝ ա) եթե էլեկտրոնային բանալու *վնասվածքը ոչ նպատակային շահագործման հետևանք է, բ) եթե չեն պահպանվել էլեկտրոնային բանալու* շահագործման կանոնները և պայմանները, գ) եթե վնասվածքը հետևանք է լարման տատանումների, ջրհեղեղի, հրդեհի, ոչ ճիշտ ջերմային ռեժիմի և այլ նման պատճառների: 6 ամսվա ժամկետն անցնելուց հետո էլեկտրոնային բանալու փոխանակումը կատարվում է վճարելով փոխանակման օրվա դրությամբ *սահմանված նրա արժեքը:*

էլեկտրոնային բանալու վնասվածքը ոչ նպատակային շահագործման հետևանք է, բ) եթե չեն պահպանվել էլեկտրոնային բանալու շահագործման կանոնները և պայմանները, գ) եթե վնասվածքը հետևանք է լարման տատանումների, ջրհեղեղի, հրդեհի, ոչ ճիշտ ջերմային ռեժիմի և այլ նման պատճառների: 6 ամսվա ժամկետն անցնելուց հետո էլեկտրոնային բանալու փոխանակումը կատարվում է վճարելով փոխանակման օրվա դրությամբ սահմանված նրա արժեքը:

4.7. Համակարգի սպասարկումը չի ներառում Պատվիրատուի խորհրդատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ՝
- հաշվապահական և հարկային հաշվառման վարման մեթոդաբանություն
- Համակարգի հետ աշխատանքի տարրերի ուսուցում
- Համակարգի շահագործման հետ չկապված՝ Windows օպերացիոն համակարգի օգտագործում
- տեխնիկական միջոցների և համակարգչային ցանցի ոչ նորմալ աշխատանք:

4.8. Կատարողը Համակարգը Պատվիրատուին է հանձնում անժամկետ օգտագործելու իրավունքով:

4.9. Պայմանագրի ավարտից հետո Կատարողը Պատվիրատուի նկատմամբ որևէ պարտավորություն չի կրում:

5. Պատվիրատուի պարտավորությունները

5.1. Կատարել համաձայնեցված վճարումները Կատարողին՝ սույն Պայմանագրով սահմանված վճարման կարգի համաձայն:

5.2. Ապահովել Համակարգի գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների և ծրագրային ապահովումների համապատասխանությունը Կատարողի կողմից ներկայացված պահանջներին:

5.3. Կատարողին տեղյակ պահել Համակարգը երրորդ կողմին փոխանցելիս:

6. Այլ պայմաններ

6.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Պատվիրատուի հանդեպ միայն ուղղակի վնասի համար, որը սահմանափակված է տվյալ Պայմանագրով սահմանված գումարի 20(քսան) տոկոսով:

6.2. Սույն պայմանագրի կատարման հետ կապված հարցերը Կողմերը կձգտեն լուծել բանակցությունների միջոցով: Կողմերի միջև համաձայնության չգալու դեպքում, վիճելի հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.3. Սույն պայմանագիրը կազմվում է 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակից՝ յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:

Հայկական Ծրագրեր ՍՊԸ	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե
h/h 1510001960150100	h/h 900011033124
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 00807555	ՀՎՀՀ 02704199
հասցե՝	հասցե՝
ք. Երևան, Չարենցի փ. 1	ք. Երևան, Օրբելի փ. 22
Տնօրեն	Նախագահ
Ա. Խաչատրյան	Ս. Հարությունյան

«ՀԱՅՀԵՂԻՆԱԿ»
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԿՈԼԵԿՏԻՎ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ARMAUTHOR"
Non-governmental collective management organization of copyright and related rights

"АРМАВТОР"
Общественная организация по коллективному управлению авторскими и смежными правами

N 07/319
31.10.2017թ.

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏԻ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆՈՒՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱԳԻԿ ՀՐԱՉՅԱՅԻ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ» ՍՊԸ-ի տնօրեն
Հասցե՝ ք.Երևան, Չարենցի 1, 10-րդ հարկ
Հեռ. +374 10 57-47-95
Անձնագիր՝ AK 0579159,003,28.07.2010թ.

ՀՀ «Հայհեղինակ» կազմակերպությունը տեղեկացնում է, որ, Գ.Սարգսյանի կողմից ներկայացված՝

«ՀԾ – Հաշվապահ 7»

անվանումով համակարգչային ծրագիրը ի պահ է վերցված կազմա-կերպությունում 2017թ. հոկտեմբերի 27 –ին 08/4294 թվի ներքո:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն, Գ.Սարգսյանի հավաստում է որ ինքը հանդիսանում է վերոնշյալ համակարգչային ծրագրի նկատմամբ իրավատերը, ինչպես նաև, որ ներկայացված տեղեկությունները ճշգրիտ են, համապատասխանում են իրականությանը և այլ անձանց իրավունքներն իր կողմից չեն խախտվել:

Որևէ անձ, ով գիտակցաբար կեղծիք է թույլ տալիս նյութը ի պահ հանձնելու ընթացքում, կենթարկվի պատասխանատվության օրենքով սահմանված կարգով /Հիմք՝ **«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»** ՀՀ օրենք, հոդ.65-69/:

Ծրագրի մեկ օրինակը պահվում է կազմակերպությունում փակ ծրարով:

ՏՆՕՐԵՆ Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ

«ՀԱՅՀԵՂԻՆԱԿ» "ARMAUTHOR" 01538081

Հայաստանի Հանրապետություն, 375009 Երևան, Կորյունի փող. 19ա Հեռ. 52 73.50, Հեռ/Ֆաքս. 52 94 92
Республика Армения, 375009 Ереван, ул. Корюна, 19а Тел. +374 1 52 73 50 Факс: +374 1 52 94 92
19a Koryun str., 375009 Yerevan, Republic of Armenia Tel.:+374 1 52 73 50 Tel/ Fax: + 374 1 52 94 92
E-mail: info@armauthor.am